ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 04 » փետրվարի 2020 թվականի որոշում N 5-Ա

ՎԱՐԴԱՆ ԺՈՐԺԻԿԻ ՄՀԵՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի, 35-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թվականի հունիսի 2-ի N 631-ն որոշմամբ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020թվականի հունվարի 20-ի կայացած նիստի դրական եզրակացությունը, Սուսաննա Գուրգենի Մինասյանի 2019 թվականի դեկտեմբերի 9-ի դիմումը.

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի բնակիչ, անչափահաս՝ Վարդան Ժորժիկի Միհերյանի (ծնված՝01.09.2003թ) նկատմամբ սահմանել հոգաբարձություն՝ հոգաբարձու նշանակելով Սուսաննա Գուրգենի Մինասյանին
2.Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նրա խնամքը և դաստիրակությունը հանձնել երեխայի հոգաբարձու՝ Սուսաննա Մինասյանին և հանձնարարել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին՝ հսկողություն իրականացնել նրա գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ. Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«11» փետրվարի 2020 թվականի որոշում N6-Ա

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով.

Որոշում եմ՝

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի անցկացման համար Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի տարածքում սահմանել երկու տեղամասային կենտրոններ.

1/ առաջին ընտրական տեղամասային կենտրոն սահմանել << Մյասնիկյանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի շենքը, հասցեն՝ Գագարին N2 /տարածքի տիրապետող՝ Լ.Պետրոսյան/

2/ երկրորդ ընտրական տեղամասային կենտրոն սահմանել Մյասնիկյան համայնքի մշակույթի տան շենքը, հասցեն՝ Լենինի N31 / տարածքի տիրապետող՝ Հ. Բաղդասարյան/:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել ընտրատարածքային հանձնաժողովին, Բաղրամյանի անձնագրային բաժանմունքին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողներին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ. Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

«17» փետրվարի 2020 թվականի N7-Ա որոշում

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ
ԾԻՐԱՆԻ ԱՅԳԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով հողի սեփականատեր՝ Ալբերտ Ալեքսանյանի դիմումը.

Որոշում եմ՝

1. Մյասնիկյան համայնքի տարածքում գտվող, Ալբերտ Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող 0,5 հա, 04-066-0180-0045 կադաստրային ծածկագրի գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի ծիրանի այգու:
2.Որոշման օրինակը ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական գրանցումն ստանալուց հետո, այն ընդգրկել համայնքի տարեկան ընթացիկ հաշվառման հաշվեկշռում :
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ. Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2020թվական N 11-Ա

ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.2020թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի անցկացման քարոզչական պաստառները փակցնելու համար Մյասնիկյան համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1)Մյասնիկյան փողոց թիվ 12ենք -2քառ.մ

Մյասնիկյան փողոց թիվ 22ենք -2քառ.մ

Երևանյան փողոց թիվ 72ենք - 2քառ.մ

2.Սույն որոշման օրինակն ուղարկել թիվ 16 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մյասնիկյան համայնքի
ղեկավար՝ *Տ.Բաղդասարյան*

2020թվականի փետրվարի 27
Մյասնիկյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 42ենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

«26»փետրվարի 2020թվականի N 9-Ա որոշում

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012թվականի հունվարի 18-ի <<Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին>> N9 որոշումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի սեփականությունն հանդիսացող (կադաստրային ծածկագիր՝ 04-066-0215-0022) 0.4550հա արտադրական նշանակություն հողամասին տալ հասցե՝ «Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ Մյասնիկյան համայնք Երևանյան N 10/11»:
2. Սույն որոշումն ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական գրանցման ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2020 թվականի մարտի 6,
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

«26»փետրվարի 2020թվականի N 10-Ա որոշում

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012թվականի հունվարի 18-ի <<Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին>> N9 որոշումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի սեփականությունն հանդիսացող (կադաստրային ծածկագիր՝ 007-012) բնակավայրի նշանակության 0.1093հա բնակելի կառուցապատման հողամասին տալ հասցե՝ «Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ Մյասնիկյան համայնք Պ.Սնակի փողոց N1/1»:
2. Սույն որոշումն ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական գրանցման ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2020 թվականի փետրվարի 26,
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«28» փետրվարի 2020թվականի N11-Ա որոշում

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ դեկտեմբերի 12-ի, <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012թվականի հունվարի 18-ի <<Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին>> թիվ 09 որոշումը.

Որոշում եմ՝

1.Արմեն Հովսեփի Գալստյանին (ծնված՝1965թ) սեփականության իրավունքով պատկանող 04-066-0053-0013 կադաստրային ծածկագրի 0.12հա տնամերձ հողամասին տալ հասցե՝ «Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ Մյասնիկյան համայնք 11-րդ փողոց N 59>>:

2.Սույն որոշումն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Տ.Բաղդասարյան

2020 թվականի փետրվարի 28,
Մյասնիկյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«27»փետրվարի 2020թվական N 12-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, 15-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղականի ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1834-Ն որոշումը և Մյասնիկյան համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի N 74-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերի դասական եղնակով աճուրդ-վաճառքն անցկացնել Մյասնիկյան համայնքի համայնքապետարանում՝ 2020թվականի ապրիլի 2-ին, ժամը 10^{00}-ին.

1)Լոտ 1՝ 04-066-0223-0005կադաստրային ծածկագրի 8.3302հա գյուղատնտեսական այլ հողատեսք, մեկնարկային գինը՝ 563000ՀՀ դրամ ,

Լոտ 2՝ 04-066-0222-0002կադաստրային ծածկագրի 18.9703հա գյուղատնտեսական այլ հողատեսք, մեկնարկային գինը՝ 1281000ՀՀ դրամ,

Լոտ 3՝ 04-066-0226-0002 կադաստրային ծածկագրի 11.1873հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի վարելահող,մեկնարկային գինը՝ 4083500ՀՀ դրամ,

Լոտ 4՝ 04-066-0226-0001կադաստրային ծածկագրի 16.0457հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի վարելահող,մեկնարկային գինը՝ 5856700 ՀՀ դրամ,

Լոտ 5՝ 04-066-0221-0001 կադաստրային ծածկագրի 7.3152հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք,մեկնարկային գինը՝ 494000ՀՀ դրամ.

Լոտ 6՝ 04-066-0222-0001 կադաստրային ծածկագրի 2.0հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք,մեկնարկային գինը՝ 1350000ՀՀ դրամ.

Լոտ 7՝ 04-066-0222-0003 կադաստրային ծածկագրի 2.0հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք,մեկնարկային գինը՝ 1350000ՀՀ դրամ.

Լոտ 8՝ 04-066-0223-0006կադաստրային ծածկագրի 12.4486հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք,մեկնարկային գինը՝ 841000 ՀՀ դրամ.

2.Հողամասի օտարման նախավճարը և քայլի չափը հաստատել հողի մեկնարկային գնի 5%-ի չափով

3. *Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Համայնքի ղեկավար՝ *Տ.Բաղդասարյան*

2020թվականի փետրվարի 27,
Համայնք Մյասնիկյան